

Պատմություն

«Թրանսփարենսի Ինթերնեշլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ն (այսուհետ՝ ԹԻՀԿ) հիմնադրվել է 2000թ., իսկ 2001թ. հոկտեմբերին հավատարմագրվել է «Թրանսփարենսի Ինթերնեշլ» միջազգային հակակոռուպցիոն շարժման կողմից՝ ներկայացնելու այդ կառույցը Հայաստանում: 2008թ. փետրվարին կազմակերպությունը վերագրանցվել է որպես «Թրանսփարենսի Ինթերնեշլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ: 2016 թ. օգոստոսին կազմակերպությունը հերթական անգամ անցել է «Թրանսփարենսի Ինթերնեշլ» միջազգային հակակոռուպցիոն շարժման կողմից կազմակերպվող պարբերական վերահավատարմագրման գործընթացը՝ շարունակելով ճանաչվել որպես «Թրանսփարենսի Ինթերնեշլ»-ի ներկայացուցիչ Հայաստանում:

2014 թ. սեպտեմբերի 19-ին Քաունթերփարթ Ինթերնեշլի հայաստանյան գրասենյակի կողմից ԹԻՀԿ-ին շնորհվել է վկայական առ այն, որ կազմակերպությունը հաջողությամբ ավարտել է Քաունթերփարթ Ինթերնեշլի հավաստագրման գործընթացը և իր կարողություններով համապատասխանում է դրա՝ ծրագրային և վարչարարական, ինչպես նաև անմիջական կապալառուի համար սահմանված ստանդարտներին:

Առաքելությունը

Կազմակերպության առաքելությունն է նպաստել արդյունավետ հանրային քաղաքականությանը և կառավարմանը Հայաստանում՝ նվազեցնելու կոռուպցիան և ամրապնդելու ժողովրդավարությունը: Իր գործունեությամբ Կազմակերպությունն ակնկալում է ներդրում ունենալ Հայաստանի շարունակական զարգացման և կայունության գործում:

Արժեքները

Կազմակերպության հիմնական արժեքներն են թափանցիկությունը, հաշվետվողականությունը, օրինականությունը, համարձակությունը, արդարությունը և ժողովրդավարությունը:

Նպատակները

Կազմակերպության նպատակներն ուղղված են՝

- նպաստելու քաղաքական, տնտեսական և սոցիալական բարեփոխումների համար բարենպաստ մթնոլորտի ձևավորմանը,
- աջակցելու թափանցիկ ու հաշվետվողական կառավարման համակարգի կայացմանը,

- խթանելու ժողովրդավարական գործընթացները, այդ թվում՝ մարդու իրավունքների պաշտպանությունը և հասարակության մասնակցությունը երկրի կառավարման գործում:

Կազմակերպությունն իր դերը տեսնում է Հայաստանում գործող կառավարական և ոչ կառավարական կազմակերպությունների համար որպես կարևոր խորհրդակցական և ջատագովության կառույց:

Կազմակերպության գործունեությունը հիմնված է իր կանոնադրության, Հայաստանի Հանրապետության օրենսդրության և «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» միջազգային հակակոռուպցիոն շարժման ուղենիշային փաստաթղթերի վրա:

ԹԻՂԿ գործունեության շրջանակը ներառում է հետևյալ աշխատանքները

- հանրային քաղաքականության ուսումնասիրություն, մոնիտորինգ և գնահատում
- առաջարկությունների ներկայացում և ջատագովություն հանուն ժողովրդավարական փոփոխության
- հանրային իրազեկության բարձրացում և կարողությունների ուժեղացում՝ ավելացնելու քաղաքացիների ներգրավվածությունը ժողովրդավարական կառավարման ընթացակարգերում
- հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի ռազմավարական դատավարություն և շահագրգիռ կողմերի օգնություն կոռուպցիայի դեմ պայքարում:

Աշխատանքի հիմնական ուղղությունները

Ներկայումս ԹԻՂԿ-ի գործունեությունն իրականացվում է հետևյալ 3 ուղղություններով.

1. Հանրային կառավարում

Կոռուպցիայի հիմնական պատճառներից են քաղաքականության և բիզնեսի սերտաճումը, անկախ և ուժեղ ինստիտուտների բացակայությունը, շահերի բախման իրավիճակի ոչ արդյունավետ կառավարումը, իրավական սողանքները, թույլ իրավակիրառ պրակտիկան և հանրային հանդուրժողականության պակասը: ԹԻՂԿ-ը խնդիր ունի հասնել այդ խնդիրների լուծմանը հետևյալ գործողությունների միջոցով.

- ազգային հակակոռուպցիոն ռազմավարության ու համապատասխան միջոցառումների ծրագրի մշակում և մոնիտորինգ
- ստանձնած միջազգային հակակոռուպցիոն իրավական պարտավորություններին Հայաստանի համապատասխանության մոնիտորինգ և զեկույց

- տարբեր ոլորտերում կոռուպցիոն ռիսկերի վերհանում և առաջարկությունների ներկայացում
- իրազեկության բարձրացում և քաղաքացիների համախմբում կոռուպցիայի դեմ պայքարում

2. Ընտրություններ

Հայաստանում ընտրությունները տարիներ շարունակ ուղեկցվել են բազմաբնույթ ապօրինություններով, ինչպիսիք են վարչական ռեսուրսի չարաշահումը, թեկնածուների և քաղաքական ուժերի համար անհավասար պայմանների ստեղծումը, ընտրակաշառքը, ընտրողների ազատ կամարտահայտության ճնշումը և այլն: Չնայած, որ 2018 թվականի դեկտեմբերի 9-ի ՀՀ Ազգային ժողովի արտահերթ ընտրություններն անցան ազատ, մրցակցային և խաղաղ ընտրապայքարի պայմաններում, կային բազմաթիվ թերություններ, որոնք պայմանավորված էին օրենսդրության բացերով և որոշ արատավոր պրակտիկաների շարունակմամբ: ԹԻՂԿ-ը խնդիր ունի հասնել այդ խնդիրների լուծմանը հետևյալ գործողությունների միջոցով.

- ընտրական օրենսդրության փոփոխությունների առաջադրում և ջատագովություն
- ընտրական գործընթացների նկատմամբ հանրային վերահսկողության իրականացում
- կուսակցությունների ֆինանսավորման թափանցիկություն և վարչական ռեսուրսի չարաշահման կանխարգելում

3. Հանրային ռեսուրսներ

Հանրային ռեսուրսները, ինչպիսիք են բնական ռեսուրսները, հանրային սեփականություն հանդիսացող գույքը, ինչպես նաև հանրային ֆինանսները հաճախ վատ են կառավարվում համակարգային թերությունների, օրենսդրական բացերի կամ կոռուպցիոն դրսևորումների հետևանքով: ԹԻՂԿ-ը խնդիր ունի հասնել այդ խնդիրների լուծմանը հետևյալ գործողությունների միջոցով.

- հանքարդյունաբերություն ոլորտի կառավարման թափանցիկության և հաշվետվողականության խթանում
- հանրային գույքի օգտագործման և ծախսերի թափանցիկության և հաշվետվողականության իրավական հիմքերի ամրապնդման ջատագովություն:

ԹԻՂԿ հեղինակությամբ և համահեղինակությամբ մշակված հրապարակումներ, հանրային բարեփոխման ուղղված առաջարկություններ և կարծիքներ

ԹԻՅԿ-ն 2018-2019 թթ. ընթացքում մշակել է թվով 31 հրապարակում՝ հանրային կառավարման, ընտրությունների և հանրային ռեսուրսների ոլորտներում, որոնց վերաբերյալ մանրամասները կարող եք տեսնել կից՝ **Հավելված 1**-ում:

ԹԻՅԿ դրամաշնորհային ծրագրեր

ԹԻՅԿ-ն իր գործունեությունը հիմնականում իրականացնում է դրամաշնորհային ծրագրերի միջոցով: 2018թ. ԹԻՅԿ-ը իրականացրել է 11 դրամաշնորհային ծրագիր հանրային կառավարման, ընտրությունների և հանրային գույքի կառավարման ոլորտներում, որոնց ընդհանուր գումարը կազմել է 776,806,036.60 ՀՀ դրամ (համարժեք՝ 1,615,149.26 ԱՄՆ դոլարին):

ԹԻՅԿ դրամաշնորհային ծրագրերի վերաբերյալ հավելյալ ինֆորմացիա կարող եք ստանալ հետևյալ հղմամբ՝ <https://transparency.am/hy/projects>:

ԹԻՅԿ 2018-2019 թթ. դրամաշնորհատուներ¹

- ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն, այդ թվում՝ Ժողովրդավարության ազգային ինստիտուտի միջոցով
- Եվրոպական միություն, այդ թվում՝ Ոչ առևտրային իրավունքի եվրոպական կենտրոնի միջոցով
- Ժողովրդավարության ազգային հիմնադրամ
- Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստան
- Պրահայի քաղաքացիական հասարակության կենտրոն
- Չեխիայի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն՝ Թրանսփարենսի Ինթերնեշլ Չեխիայի մասնաճյուղի միջոցով

¹ ԹԻՅԿ դրամաշնորհատուների մասին հավելյալ ինֆորմացիա կարող եք ստանալ հետևյալ հղմամբ՝ <https://transparency.am/hy/about/donors>